ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի սեպտեմբերի 8-ից 11-ը Իրանի Իսլամական Հանրապետություն՝ ք. Թեհրան գործուղման ընթացքում կատարած աշխատանքների արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը** – Տիգրան Անդրեասյան,

2. **Զբաղեցված պաշտոնը** – Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի անասնաբուժության վարչության գլխավոր տեսուչ,

3. **Գործուղման վայրը և ժամկետները** - ԻԻՀ մայրաքաղաք Թեհրան, 2023 թվական, սեպտեմբերի 8-ից 11-ը,

4. **Հրավիրող կողմը** - Իրանի Իսլամական Հանրապետություն՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին,

5. **Գործուղման նպատակը** – ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի սահմանային անցակետի մոտ կենդանիների արտահանման և տարանցիկ փոխադրման վերջնական անասնաբուժական զննման կամ կարանտինային անցակետ կառուցելու նպատակով,

6. **Քննարկված թեման** – ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի սահմանային անցակետի մոտ կենդանիների արտահանման և տարանցիկ փոխադրման վերջնական անասնաբուժական զննման կամ կարանտինային անցակետ կառուցելու վերաբերյալ,

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրաձայնված կամ քննարկված հարցերը** – հանդիպում Իրանի անասնաբուժության կազմակերպության գլխավոր տնօրեն, ԻԻՀ Գյուղատնտեսության նախարարի տեղակալ Վահիդ Սալեհիի, ԻԻՀ ձկնաբուծության կազմակերպության տնօրեն, ԻԻՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Սեյեդ Հոսեին Հոսեինիի և այլ պաշտոնական անձանց հետ։

ԻԻՀ Գյուղատնտեսության նախարարի տեղակալ Վահիդ Սալեհիին ողջունեց հայկական պատվիրակության այցելությունը ք.Թեհրան և առաջարկեց հետևյալը՝

1) Հայաստանի Հանրապետությունից կենդանիների արտահանման և տարանցիկ փոխադրման վերջնական կարանտինային անցակետ կառուցելու նպատակով պատրաստակամություն ենք հայտնում ձևավորել համատեղ աշխատանքային խումբ,

վերջինս կհամագործակցի նաև հիվանդությունների կանխարգելման, վերահսկման և տեղեկատվության փոխանցման հարցերով,

2) Այցելել անասնաբուժական ախտորոշիչ լաբորատորիա,

3) պատրաստակամ ենք համագործակցելու նաև անասնաբուժական պատվաստանյութերի արտադրության ուղղությամբ,

4) էլեկտրոնային կառավարման ծրագրերի ուղղությամբ համագործակցություն՝ կենդանիների հիվանդությունների մոնիթորինգ: Հիվանդությունների հետագծելիության ապահովում՝ Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության դրույթերի համաձայն: Մենք պատրաստակամ ենք Ձեզ շնորհանդեսի ձևով հետագայում ներկայացնել նշված ծրագիրը և հետագայում Ձեզ ցանկությամբ նմանատիպ ծրագիր կարող ենք տրամադրել,

5) ցանկություն ունենք ոչխարի մսի ներմուծում ԻԻՀ լինի շարունակական,

6) առողջության սերտիֆիկատների նույնականացում և այդ ուղղությամբ մենք համագործակցում ենք հարևան այլ պետությունների հետ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Աշխեն Շիրվանյանը նույնպես ողջունեց և շնորհակալություն հայտնեց իրանական կողմին կարանտինային անցակետ կառուցելու հարցում համագործակցելու ուղղությամբ և նշեց հետևյալը՝

1) մեր համար այս պահին խիստ կարևոր է անասնաբուժական զննման կամ կարանտինային կետի կառուցումը և պետք է հստակեցնենք ԻԻՀ-ում անասնաբուժական պահանջները,

2) վստահեցնում եմ, որ հայկական կողմը պատրաստակամ է կառուցելու անասնաբուժական զննման կամ կարանտինային կետը և մեր այցի նպատակն է ծանոթանալ Ձեր դիրքորոշմանը:

ԻԻՀ Գյուղատնտեսության նախարարի տեղակալ Վահիդ Սալեհիին նշեց, որ մշտական եղել եմ անասնաբուժական կարանտինի պատասխանատուն և տարանցիկ փոխադրվող կենդանիները մեր օրենքի համաձայն պետք է զննվեն, բացի այդ մի քանի երկրների հետ մենք ունենք փոխադարձ անվտագության առողջապահական ստորագրված

արձանագրություններ, այդ թվում նաև Հայաստանի հետ: Հայաստանի Հանրապետությունից ներկրված կենդանիների առողջության մասին որևէ կասկած չկա, սակայն երբեմն որոշ երկրներից ներկրվում են հիվանդ կենդանիներ: Պետք է նշեմ, որ Արդեբիլ նահանգում՝ Ադրբեջանի սահմանին մոտ մենք ունենք մասնավոր կարանտինային զննման կետ, որը չունենք Հայաստանի և Թուրքիայի հանրապետությունների հետ, և այդ ուղղությամբ այժմ բանակցում ենք:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Աշխեն Շիրվանյանը նշեց, որ Հայաստանի Հանրապետությունից արտահանվող բոլոր կենդանիների կարանտինացվում են:

ԻԻՀ Գյուղատնտեսության նախարարի տեղակալ Վահիդ Սալեհիին նշեց, որ որևէ հարց կամ խնդիր չունենք և գիտեմ, որ Հայաստանի Հանրապետությունը բոլոր սահմանված պահանջները կատարում է, սակայն հազվադեպ պատահում է, որ կենդանիների մոտ ականջապիտակները պոկված ընկած են լինում: Միաժամանակ նշեց նաև, որ ԻԻՀ-ում Հայաստանի սահմանին մոտ տարածք չունեն, որպեսզի կարանտինային կետ կառուցեն:

ԻԻՀ-ում ՀՀ առևտրային կցորդ Վարդան Կոստանյանը նշեց՝ ինչպես ասվեց տիկին Շիրվանյանի կողմից մենք պատրաստակամ ենք կառուցելու, և եկեք ֆիքսենք, որ մենք կառուցում ենք զննման կետ, ոչ թե կարանտինային կետ, որի համար Ձեզ կխնդրենք ներկայացնել զննման կետի պահանջները:

ԻԻՀ Գյուղատնտեսության նախարարի տեղակալ Վահիդ Սալեհիին նշեց, որ Բուշեր այցելության նպատակն է, որ Դուք տեսնեք պետական կարանտինային կետը, և ՀՀ-ում նմանօրինակ շինություն կառուցեք, վստահեցնում եմ, որ այն կառուցվել է միջազգային չափորոշիչների համաձայն և որի համար հրավիրել ենք ավստրիացի մեր գործընկերներին այն գնահատելու համար:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները** – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Աշխեն Շիրվանյանը նշեց, որ ՀՀ-ում պահապանվում են բոլոր անասնաբուժական պահանջները և պայմանները, ուստի օգտվելով առիթից կխնդրեի վերանայել կենդանիների տարանցիկ տեղափոխման սահմանափակումների

հարցը՝ մինչև ՀՀ-ում կարանտինային զննման կետի կառուցումը: ԻԻՀ Գյուղատնտեսության նախարարի տեղակալ Վահիդ Սալեհին նշեց, որ բարձարացված հարցը այսօր կքննարկի նախարարի հետ:

Միաժամանակ պարոն Սալեհին նշեց, որ 2023 թվականին բազմաթիվ երկրներից ներմուծվել են թե մսեղիք և թե կենդանիներ, սակայն ՀՀ-ից ներմուծված մսեղիքը կամ կենդանիները մեր ժողովրդի համար առավել ընդունելի են: Կխնդրեի հստակեցնել մոտավորապես երբ կսկսեք շինարարությունը և երբ կավարտվի:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Աշխեն Շիրվանյանն առաջարկեց վերջնական այս այցը ամփոփելուց հետո մենք կֆիքսենք ժամկետները:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձև, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները** - Հայկական կողմից առաջարկություն եղավ հրավիրել իրանական կողմին՝ անցակետի բացմանը:

Միաժամանակ հանդիպել ենք նաև ձկնաբուծության գծով ԻԻՀ Գյուղատնտեսության նախարարի տեղակալի հետ, վերջինիս կողմից առաջարկվել է համագործակցել հետևյալ ուղղություններով՝ առևտրային, տեխնոլոգիական, ուսուցողական, ներդրումային: Քննարկման մասնակցում էր նաև անասնաբուծության գծով պատասխանատուն, որը տեղեկացրեց, որ ԻԻՀ գենոֆոնդի բազայի պահուստով աշխարհում 2-րդ տեղն է զբաղեցնում:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Աշխեն Շիրվանյանը նշեց, որ Ձեր կողմից բարձրացված հարցերը հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության համար, որի կապակցությամբ վերջերս ՀՀ էկոնոմիակյի նախարար պարոն Քերոբյանի հետ քննարկել է ՀՀ-ում սելեկցիոն կայանի ստեղծման հարցը: Եվ այս շրջանակներում մեր հետաքրքրությունները ևս համընկնում են: Ուստի, խնդրում եմ առաջիկա միջկառավարական կոմիտեի նիստում առավել առարկայական ներկայացնել առաջարկվող ծրագրերը, հետագայում հայկական կողմի հետ քննարկելու համար:

Ձկնաբուծության գծով ԻԻՀ ձկնաբուծության կազմակերպության տնօրեն, ԻԻՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Սեյեդ Հոսեին Հոսեինիին նշեց, որ հուսով է նիստում հնչեցված հարցերը կքննարկվեն և կարձանագրեն համագործակցության եզրեր, ինչպես նաև պատրաստակամություն հայտնեց կարմրախայթ տեսակի ձկների արտադրություն հիմնել ՀՀ-ում:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Աշխեն Շիրվանյանը կարևորեց նաև համագործակցությունը նեղ մասնագիտական շրջանում, իրանական կողմից առաջարկն ընդունվեց՝ կարևորելով պրակտիկ համագործակցությունը:

Այցելել ենք նաև կենդանիների հիվանդությունների ախտորոշիչ և սննդամթերքի անվտագության փորձաքննության լաբորատոր կենտրոն, ծանոթացել աշխատանքներին: Լաբորատորիայի տնօրենը նշեց, որ ԻԻՀ-ում կան շուրջ 180 մասնավոր լաբորատորիաներ, որոնք հսկվում են մեր լաբորատորիայի կողմից, ինչպես նաև իրականացվում է գիտականորեն հիմնավորված ռիսկերի գնահատում, իրականացնում են ակտիվ և պասիվ մոնիթորինգ:

Պայմանավորվածության համաձայն՝ մեկնել ենք Բուշեր, որտեղ ծանոթացել ենք կենդանիների տարանցման համար նախատեսված կարանտինային և զննման կետին, տեղի են ունեցել քննարկումներ, հայկական կողմին է տրամադրվել կարանտինային և զննման կետի հատակագիծը:

Բուշերում այց է կատարվել նաև ծովախեցգետիններ արտադրությամբ զբաղվող Lazak ընկերության գործարան, որտեղ ներկայացվեց բուծման, պահպանման, փաթեթավորման և արտահանման պրոցեսը, քննարկվեց հնարավոր համագործակցության հարցեր:

Սույն թվականի սեպտեմբերի 11-ին այց կատարվեց նաև Քյարաջ քաղաքում գտնվող կենդանիների պատվաստանյութերի արտադրությամբ զբաղվող Pasouk ընկերության գործարան, որտեղ ներկայացվեց պատվաստանյութերի արտադրության պրոցեսը, պատվաստանյութերի տիպերը, քննարկվեցին հնարավոր համագործակցության հարցեր:

Այնուհետև Թեհրանում տեղի ունեցավ ԻԻՀ անասնաբուժության կազամակերպության

գլխավոր տնօրեն, ԻԻՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Վահիդ Սալեհիի հետ ամփոփիչ հանդիպումը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Աշխեն Շիրվանյանը շնորհակալություն հայտնեց այցը բարձր մակարդակի կազմակերպելու համար և հույս հայտնեց, որ այն նոր լիցքեր կհաղորդի գյուղատնտեսական ոլորտում համագործակցության խորացման համար: ՀՀ էկոնոմիկայի փոխնախարարը հայտնեց իր պատրաստակամությունը սեղմ ժամկետներում հայ-իրանական սահմանի մոտ կառուցել Բուշերում ներկայացված նմանատիպ զննման կետ հաշվի առնելով կենդանիների թվաքանակի և այլ տեխնիկական առանձնահատկություններ, միաժամանակ հետաքրքրվեց Սալեհի և ԻԻՀ գյուղատնտեսության նախարարի հանդիպումից՝ կապված մինչև զննման կետի կառուցումը Իրանով տարանցման արգելքի վերանայման: Սալեհին տեղեկացրեց, որ խոսել է նախարարի հետ և մինչև զննման կետի կառուցումը, որպես ժամանակավոր խնդրի լուծում առաջարկում է, որ իրենց ներկայացուցիչը ներկա գտնվի Հայաստանում և հայ գործընկերների հետ համատեղ կենդանիների մեքենաների վրա բեռնվելու պահին իրականացնեն զննում: Որպեսզի լրացուցիչ ծախսեր չլինի Իրանի և Հայաստանի վրա, իրենց աշխատակցի կեցության և տեղաշարժի ծախսերն առաջարկեց իրականացնի կենդանիները տեղափոխող տնտեսվարողը: Հնարավոր է դիտարկել նաև աշխատակցին կենդանիների տեղափոխման օրերին միայն Հայաստան կանչելու տարբերակը: Սալեհին նշեց, որ իրենք նույնպես ունեն մսի կարիք և խնդրեց, որպեսզի իրենց երաշխիքներ տրվեն, որ արաբական երկրներ Հայաստանից կենդանիներ արտահանելուց բացի, Իրան նույնպես այն կիրականացվի: Իրանական կողմն առաջարկեց, որպեսզի իրենց ներկայացվի կենդանիների պատվաստանյութերի Հայաստանի պահանջը, որից հետո իրենք պետական և մասնավոր ընկերություններից կներկայացնեն դեղերի ցանկ և գնացուցակ: ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Աշխեն Շիրվանյանը խոստացավ քննարկել այդ բարձրացված հարցերը և իրանական կողմին տեղյակ պահել արդյունքների մասին:

Հանդիպմանը ներկա էր նաև Արազ ազատ տնտեսական գոտում գտնվող Arman Aras ընկերությանը պատկանող սպանդանոցի սեփականատերը, ով նշեց, որ հիմա էլ իրականացնում են Հայաստանից կենդանիների ներմուծում և պատրաստակամ են առաջիկա երեք ամիսների ընթացքում մինչև 100 հազար գլուխ մանր եղեջերավոր կենդանի ներմուծել Հայաստանից:

Հանդիպման ավարտին պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ աշխատանքային կարգով մինչև հոկտեմբերի սկիզբ իրանական կողմի Հայաստան կատարվելիք այցը հստակեցնել, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտները և արդեն Հայաստանում քննարկել դրանց գործնական փուլ մտցնելու հետ կապված հարցեր:

Գործուղվող՝ Տիգրան Անդրեասյան 14▯09▯2023

(ստորագրությունը, ամսաթիվը)